

տեւերով իրենց նախորդներին՝ Հալի-
տի շեղուեն պետութեան և ժո-
ղովրդին բարեք բերող ճանապարհ-
հից:

Օգտուելով այս առթից և ա-
զօթելով, որ բարձրեալն Ըստուած
պարգևէ Չերդ Վեհափառութեան
երկար կեանք՝ հայրապետութեան
գաճ, վերայ խնդրում ենք նաև որ
Չեր ազօթքների և պաշտաման
միջոցներին Մեզ Հմուտանք:

(Մենք անձնական Շահ)

Շահն ձեռքով գրում.

Ստոյգ է. Շնորհին Աստուծոյ

ՇԱՀՆՇԱՀ ՄՈՒՋԱՆԵԼԵԳԻՆ, ՊԱՊԱՐ

Ինչպէս Պարսկաստան:

Դրեցաւ ի մայրաքաղաք

Թեհրան

Արքայական պաշտատմ

Չեմազուէլամի ամսի 6

1316 թիւ:

Մեր Թագաւորութեան 3-րդ տարին:



ԿՐՕՆԱԿԱՆ—ԲԱԺԻՆ

ՀԱՒԱՏՈՅ ՄԱՐՏԸ.

«Այդ տղամ, որ ունի խակ՝ բաւցե-
նոյնպէս և լիախաղ, և որ ոչ ունի լի-
վաճառեցի գնորդ իւր և գնեցի իւր սու-
սեր»:

Դուի. Ի. 36:

ԴՈՒՎԱՍՏԻ աւետարանի մէջ շատ կան
պատմութեանքներ, որոնք միայն նո-
րան յատուկ են, միւս աւետարանների մէջ
չեն կրկնուում: և զրիմէ բոլոր այդ պատ-
մութեանքները մի սուր կողմ ունին՝ մի ինքնու-

րոյն և խիստ դեաճատելի աւետարանական
ճշմարտութիւն են պարզարանում: Դորանցից
մէկն է ահա մեր աչքի առաջ, որ կարելի է
ասել մեր փրկչի վերջին կտակն է ներկայա-
ցնում՝ խորհրդաւոր բնութեանց յետոյ՝ նախ
քան դէպի Գեթսեմանի և դէպի Գողգոթա
սանող վշակցի ճանապարհի վերայ ոտք կո-
խելը: Իւր աշակերտներին վերջին անգամ
տուած սիրայորդոր պատուէրները ամփո-
փումը: Մենք անանում ենք այստեղ թէ
որչափ թիւր է և անիրաւացի այն վարմուն-
քը, որով աւետարանի հաւ հաւ խօսքեր
ստացի ինչպով ըմբռնած՝ առանց նորա
յարակից հանգամանքները մանաւանդ թէ
ամբողջ աւետարանի ողին ի նկատի առնելու,
համարում են ամէն տեղի և ժամանակի յար-
մար սկզբունք, և այդպիսով ամենատարօր-
նակ հետեութիւններ հանում նոցանից: Մի
ժամանակ Բրիտոս իւր աշակերտներին քա-
րոզութեան ուղարկելով պատուիրել էր նո-
ցա ոչ մի պաշար չկրցնել հեաները և ոչնչի
հոգս չքաշել: շատ պարզ էր նոցա կոչումը,
ըստ այնմ և պարզ յարաբերութիւն պէտք է
ունենային ամէնքի հետ ու պարզ բնգունե-
լով իւրն գտնէին ամէն տեղ: Խաղաղ ժամա-
նակ էր այդ նոցա վարդապետը դեռ յար-
դուած ու սիրուած էր բոլորից: հրեայ ժո-
ղովրդի համար մի մարգարէ էր Յոյ որ խօ-
սում և զործում էր ինչպէս ոչ մէկը նոյն
խակ մեծ մարգարէներից, և առաքիւյ էր
ուրեմն ամենուրեք: ակնկալութիւնների. իսկ
նոքա եղեր էին աւետարանելու թէ իսրայէլի
զարեթի ի վեր անուցած այդ ակնկալութիւն-
ների կատարման ժամանակը մօտ է. բնական
է՝ ուրեմն, որ ամէն դուռ բաց գտնէին իրենց
առաջ և յաջողութեամբ ու ստանցարդիքի
գլուխ հանելով իրենց առաքելութեան գործը՝
առատ վարձատրութիւն և ստանային իրենց
աշխատութեան համար: Ժամանակը բոլո-
րովին ուրիշ էր այժմ: և հանգամանքների
փոխուելու հետ նոցա պահանջներն ևս պէտք
է փոխուէին՝ պէտք է փոխուէր նոցա ամբողջ
գործունէութեան կղանակը: Նոքա հանդէս
պէտք է գային շուտով իրրե հետեւողներ մի
յանցաւորի, որին հրեայ օրէնքը դատապար-
տել էր և այդ օրէնքը բացատրողներն ու

գործադրողների միարերան վճիռը խաչի ա- նարգական մահուան էր մատնել. և պետք է քարոզէին նոքա աշխարհի համար անհասկա- նալի ու խիստ դատապարտելի մի վարդապե- տութիւն, որով նոյն յանցաւորն իրիւ հրեայ ժողովուրդի բոլոր անկալութեանց կատա- րումն տուող Մկիւս էր հռչակուում. և ոչ մի- այն հրեայ ժողովուրդի այլ նա և բոլոր աշխար- հի ուղեցոյցը գէպի ճշմարիտ կեանք՝ պարզեո- ղը մի յաւիտենական երանութեան, որ մարդիկ այնուհետեւ փառքի ու մեծութեան գաղափրն պէտք է չորոնէին, այլ խոնարհութեան զբը- կում և խաչի պատուանդանի ներքոյ: Այսպի- սի գործի համար բաղմամբովանի պատրաստու- թիւն էր հարկաւոր՝ հարկաւոր էր ոտքից դուրս գլխուած լինել աշխարհի գէմ և նորա կողմից սպասուող անվերջ հաւածանքներին գլխաւա- լու միջոց և կարողութիւն ունենալ:—Ահա այս հսկայական հոգեւոր մարտի համար զէն- քի էր հրաւիրում Երկնաւոր Զօրապետը իւր վերջին կտակով զինուորներն այն փոքրիկ խմբին, որ մի քանի ժամից յետոյ փախչելու էր՝ թշնամու ձեռքը թողնելով Սորան. բայց ապագան ցոյց տուաւ, որ անանգի չէր Սորա հրաւերը:

Երկար միջոց չէր անցել Եաւիտենական Վարդապետին վերջին հրամեշտը տալու օրից, երբ Սորա աշակերտներն զգացին, որ ամէն կողմից շրջապատուած են թշնամիներով և իւրաքանչիւր քայլափոխում սրի հետ պէտք է գործ ունենան: Եւ այնուհետեւ քրիստո- նեական եկեղեցւոյ ծախալին կոխուած է և- ղել շարունակ այդ սուրբ յաճախ ստիպուել է նա սուր առնել իրօք իւր օրբազան ա-ւանդները պաշտպանելու համար: աւելի յա- ճախ խոնարհել է գլուխը սրի առաջ՝ իւր պաշտպանած բարիքների անկողնապալի լինելը ապացուցանելով—բայց մնացել է միշտ ան- ընկձնելի՝ անհաւասար կռուի մէջ: Որչափ ա- րիւն է նստել այդ կռիւը միայն մեր Լուսոյ Մօրն՝ Հայաստանայց Առաքելական ս. Եկե-ղեցւոյն: Ե. դարի կրօնական պատերազմները շատերին յայտնի են. բայց իրօք հայոց ազգը աւելի վաղ է սուր բարձրացել քրիստոնէական հաւատի պաշտպանութեան համար՝ այն ժա- մանակ արդէն, երբ խաչի պաշտօնն ազատ չէր

ոչ մի տեղ աշխարհիս երեսին և միայն Արա- ռատաւի ստորոտում, նոր նուաճած երկրի վերայ, ծածանում էր նորա յաղթութեան զրօշը: Եւսերիոս Կեսարացին պատմում է, որ 311 թ.-ին, երբ հռոմէական պատմութեան միւս մասերում հաւածանքը քրիստոնէութեան դէմ բոլորովին դադարելու մօտ էր և կամաց կամաց յառաջ էր գալիս Կոստանդ- զին Մեծ, իւր յաղթանակներով ծանապարհ հորթելու նորա համար՝ արեւելքի կեսը Մաքսիմիոս Դադան շարունակում էր դեռ ա- մէն բռնութիւններ գործ գնել. ի միջի այլոց նա ստիպում է հայերին, որոնք սկզբից ի վեր Հռոմայեցւոց բարեկամներն ու զինակիցներն էին և, քրիստոնէայ լինելով, ջերմեռանդ երկր- պաղողներ էին ճշմարիտ Աստուծոյ»—զոհ մա- տուցանել կուռքերին. բայց սաստիկ ընդդիմու- թիւն է գտնում և չարաչար պարտութիւն կրում նոցանից: Այսպէս և Տրդատ Մեծի յա- ջորդ Խոսրովի օրով Պարսից գէմ մղած պա- տերազմը կրօնական բնաւորութիւն ունէր Հայերի աչքում և ս. Վրթանէս հայրապե- տը այդ պատերազմում ընկած վաչէ զօրա- վարին ու իւր ընկերներին սրբոց կարգը դա- սեց, իրեւ նահատակներին: Բանի՜ քանի այդ- պիսի նահատակներ են ընկել այնուհետեւ բաց դաշտում թշնամու նեակերից, և մնայլ բան- տերում, դաճի՜ սրի տակ: Եթէ Հայոց լեռ- ների և ձորերի գաշտերի ու քարափների վերայից քերել կարելի լինէր այն բոլոր հե- րոսների անուններն ու պատմութիւնները, որոնք Ե. Զ. Է. Ը. և յաջորդ դարերում իրենց անձը զրել են հայրենի սրբութիւննե- րի պաշտպանութեան համար. եթէ մայր եր- կիրն արձագանդ տալ կարողանար ու այն բոլոր հեծութիւններն ու մրմունջները կրկնէր, որ յանուն Բրիստոսի թափուած արիւնն ու ար- ցունքը կրանկիս լսել է՝ կարծեմ աշխարհիս թուղթն ու թանաքը բաւական չէին լինի ամէնը զրի առնելու: Եւ այդ ամէնը եղել է ի կատարումն մեր Փրկչի վերջին կտակի:—Ար- դեօք զի՛ն ունի նորա կտակը մեզ համար նաև այսօր, և ուղիղ ենք հասկանում այն:

Երբ Սա պատուիրում էր իւր աշակերտ- ներին, հազած զգեստը վաճառել և սուր գնել՝ որչափ թիւր էր դեռ նոցա հաս-

կացողութիւնը որչափ հեռու էին աւետարանի բուն ոգին ըմբռնելուց, մինչ ատանց երկար բարակ մտածելու՝ «ահա այստեղ երկու սուր կայս, պատասխանեցին. և որչափ կսկիծ, որչափ դառն հեղեղութիւն կար փրկչի խօսքի մէջ, երբ վրայ բերաւ՝ «Բաւական են Բաւական. այս աւելի քան բաւական էին Սորա անգուշ ջանքերը, Սորա հրաշարան քարոզներն ու սքանչելի դործերը մարդոց խառն միտքը լուսաւորելու և կորցացած սրտերը մշակելու համար. նոցա հոգեւոր կուրու թիւնն այն ժամանակ միայն փարատուել և հասկանալ կարող էին թէ ի՞նչ է այն սուրբ, որով պէտք է կոռնեն աշխարհի դէմ, երբ Զօրագլուխը նահատակներին՝ խաչի նշանով զինուած, մահուան թաղաւորութիւնը կործանեց և մեծ յաղթանակով իւր Առաքողի մօտ բարձրացաւ։ Իսկ դարերի պատմութիւնը մեզ սովորեցնում է, թէ որպիսի մեծ զօրութիւն է ունեցել այդ զէնքը նաև Սորա հետեւողների ձեռքում։ Սրով հանդէս գային նոքա թէ սրի նշանակ լինէն՝ միանոցն էր. նոցա ոյժ և յաղթութիւնն սուսողը ոչ թէ նիւթական սուրն էր, այլ հոգեւոր արիւթութիւնը՝ այն անխորատակելի հաւատը, թէ մի Ամենակարող Տէր և Բազմագութ Հայր կայ երկրներում, որ հրամայում է արդարութեան ջատագով կանգնել, հակառակ աշխարհի ծանր սպառնալիքներին, հակառակ շարի փորձութիւններին։—Այսօր մեզ ոչ մի կողմից սուր չէ սպառնում և մենք կարիք չունինք զէնք առնելու ի պաշտպանութիւն մեր դաւանած ճշմարտութեան։ Բայց հոգեւոր զինուած լինելու և հաւատոյ մարտը վարելու կարիքը նոյնքան մեծ է մեր օրերում, որքան եղել է երբ և իցէ։ Մեր մարտը մղար ուսմունքների ու կարծեցեալ ճշմարտութիւնների դէմ է, որոնցով կարծես իւր անմահութեան աթոռի վրայից ցած իջեցնել են կամենում միակ ճշմարտին և տեղը մի անկերպարան կուռք նստեցնել։ Մեր սեփական ստոր կրքերի և նիւթական ունեւթեանց հետ կապող չար ցանկութիւնների դէմ է մեր մարտը, որոնք արդարութեան ու սրբութեան շաւղից մեզ մղորեցնել և ապականութեան խորխորատը ձգել են փորձում։ Եւ անհրաժեշտ է, որ մենք սպառազինու լինք ճշմարտութեան բոլոր զէնքերով ու արի զինուոր-

ների լինինք այս հոգեւոր մարտի մէջ։ Զփախեանք զիստութեան զօրութիւնից, որի անուշով ունայն տեղը մեզ սպառնում են. իսկական զիստութիւնը մեր հակառակորդը չէ, այլ մեր բարեկամը, որ մեր ձանապարհներն աւելի կը լուսաւորէ ու կհարթէ՝ աւելի հառու կցարձնէ մեր զէնքերը։ Եւ անկարելի է, որ մենք ընկճուինք ու պարտութիւն կրենք, եթէ առկուեսութիւն ունենանք մինչև ի մահ կոռնելու յանուն մեզ առաջնորդող սկզբունքների, զի — «այս է յաղթութիւնն, որ յաղթէ աշխարհի՝ հաւատքն մեր»։



ԱՍՏՈՒԱԾԱՅՈՒՆՆ Ս. ԳԻՐԸ.

Ինչքան քան է գրուել այն օրից ի վեր, երբ մարդիկ սովորեցին զանազան նշաններ գծելով արտայայտել իրենց միտքը. գրուել է քարի ու պղնձի վերայ՝ մագաղաթի և զանազան տեսակ թղթերի վերայ—ժամանակի հոսանքը սրբել, տարել է բուրբուր, և մի խղճալի մնացորդ միայն թողել. իսկ այդ մնացորդից որչափ արդեօք մատչելի է և հոգեւոր անուշ է մատակարարում սովորական մահկանացուներին. քանի՜ մարդ արդեօք մատենագրանների խորքերն են մտնում կամ մոռնջ արձանագրութիւնների առաջ ամիսներով և տարիներով աքնում։ Հին հին ժամանակների մեզ թողած աւանդ վերակենդանացնելու և կեանքի խրատը նոցանից հանելու համար, եթէ մի ժամանակ դարերով էր աճում գրականութիւնը, այժմ՝ օրերով է աճում, անթիւ անհամար մանր գրքակները չհաշուած, տարեցտարի գալիս մեր աչքի առջեից անցնում են նորանոր մատենագիրներ, նորանոր հոշակ ստացած հեղինակութիւններ՝ անցնում են, և ըստ մեծի մասին կրկին չեն յիշուում. նա որ երէկ փայլում էր հրապարակի վերայ, այսօր լոկ անուշով յայտնի է, իսկ նորա գրութեանը կարգալու մենք այլ ևս միջոց չունինք, կամ եթէ կարգում ենք՝ յօրանջում ենք ձանձրութիւնից։—Մի գիրք կայ միայն, որ ահա դարեր շարունակ կարդում են մարդիկ և երբէք չեն ձանձրանում. որ կարգում են ամէնքը՝ թէ բարդ ակնոցներն աչքերին, խոր մտքերի մէջ խորասուզուած գիտնականը, թէ կոշտ ճակատով և ձեռներով՝ հաղիւ առեւերը միմեանց հետ հեղեղ կարողացող գիւղացին. թէ քաղաքակիրթ Եւրոպայի բնակիչները և թէ Աֆրիկայի անապատում